ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/130

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ
Բողոք բերող՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Ն. Շահբազյանի,
«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Պետրոսյանի,
«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ տնօրեն՝ Է. Թովմասյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցում, անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 26.12.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. պարտավորեցնել կասեցնել «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնման գործընթացը, պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումներ,

2. արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը, պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 26.12.2020թ.-ին:

28.12.2020թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/130 համարի ծածկագիրը:

12.01.2021թ.–ին՝ «Լիոն Սեքուրիթի սերվիս» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

12.01.2021թ.-ին, 19.01.2021թ.-ին, և 22.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 19.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.01.2021թ.-ին:

2. «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն 26.12.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ի կողմից ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման «1»՝ Անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռք բերման մրցույթի բանակցությունների անցկացման ընթացքում «Լիոն սեքյուրիտի սերվիս» ՍՊ և «Քինգ Մարշալ» ՍՊ ընկերությունների կողմից

տեխնիկական բնութագրում պահանջված երկու պահակակետերի համար ներկայացվել են չհիմնավորված ցածր գներ, որոնք ցածր են անվտանգության և պահնորդական ծառայությունների համար անհրաժեշտ ծախսերի և շահույթի գումարից, և այն գնից, որը ձևավորվել է մրցակցության պայմաններում համադրելի մատուցվող ծառայությունների շրջանակներում՝

«Լիոն սեքյուրիտի սերվիս» ՍՊԸ - 6,790.000 ՀՀ դրամ ամսական 282,916.67 ՀՀ դրամ մեկ պահակետի համար

«Քինգ Մարշալ» ՍՊԸ -6,800.000 22 դրամ, ամսական 283,333.34 ՀՀ դրամ մեկ պահակետի համար,

Համաձայն «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրի կատարողը պարտավոր է իրականացնել «1. Պահակակետ թիվ 1 - բ. Երևան Գյուրջյան 14 հասցե /մակերեսը 2,5հա/,

Պահակակետ թիվ 2 - բ. Աբովյան Արզնու խճուղի 4 հասցե /մակերես 5.64հա/:

Պահակակետեր թիվ 1,2-ի պահպանության տակ է գտնվում հողատարածք և շենք-շինություններ:

Տարածքի անվտանգությունը և պահպանությունը յուրաքանչյուր պահակակետում պետք է ապահովվի 4 աշխատակցի միջոցով (տարվա բոլոր օրերին, ներառյալ ոչ աշխատանքային և տոն օրերը), որոնցից նվազագույնը 1 աշխատակցի ներկայությունը յուրաքանչյուր պահակակետում 24 ժամյա ռեժիմով պարտադիր է:

Յուրաքանչյուր օր շուրջօրյա ռեժիմով աշխատակիցը պետք է հերթապահություն իրականացնի տեսահսկման համակարգի միջոցով,

- *իրականացնի հասարակական կարգի վերահսկողություն,*
- *կանխի խոշոր նյութական արժեքների տեղաշարժը առանց համապատասխան թույլտվության և փաստաթղթերի,*
- *արգելի կողմնակի անձանց մուտքը,*
- *կատարի տարածքի շրջայց,*
- *իրականացնի Պատվիրատուի կողմից սահմանվող անվտանգության և պահակային կանոնները,*
- *արագ արձագանքի արտակարգ իրավիճակների դեպքում/հրդեհ, խուլիգանություն, հարձակումներ և այլն/ կատարելով նաև անհրաժեշտ ահազանգեր,*
- *3-5 րոպեի ընթացքում ապահովի հատուկ նշունակության խմբերի առկայություն պահպանվող տարածքում,*

Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատակցի անգործության կամ անհրաժեշտ միջոցառումները ժամանակին չիրականացնելու հետևանքով Պատվիրատուին հասցված վնասի համար:

Անվտանգության և պահնորդական ծառայության աշխատակիցը պետք է ունենա ձեռքի լապտեր գիշերային ժամերին շրջայցերի համար նախատեսված և անհրաժեշտ լուսավորություն ապահովող, ռետինե մահակ:

Պահնորդական ծառայությունները կարգավորվում են «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ Օրենքով և Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված է Թիկնապահական և պահնորդական գործունեության սկզբունքները՝

1. Թիկնապահական և պահնորդական գործունեությունն իրականացվում է օրինականության, օրենքի առջև բոլորի հավասարության, մարդու և քաղաքացու իրավունքները, ազատություններն ու արժանապատվությանը, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները և օրինական շահերը հարգելու, պաշտպանվող ֆիզիկական անձի ու պահպանվող օբյեկտի պաշտպանությունը հուսալի և անվտանգ եղանակով իրականացնելու սկզբունքների հիման վրա:

Նույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված է Թիկնապահի և պահնորդի իրավական կարգավիճակը՝

1. Թիկնապահը և պահնորդն աշխատում են աշխատանքային պայմանագրի հիման վրա, և նրանց վրա տարածվում են աշխատանքային օրենսդրության պահանջները:

2. Թիկնապահի և պահնորդի աշխատանքին հավակնող անձը աշխատանքային պայմանագիր կնքելիս աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի հետ մեկտեղ պարտավոր է ներկայացնել իր կողմից հատուկ պատրաստություն (որակավորում) անցնելը հավաստող փաստաթուղթ:

3. Թիկնապահի և պահնորդի կարգավիճակ ձեռքբերելու և թիկնապահական և պահնորդական գործառույթներ իրականացնելու (այդ թվում՝ զենքի օգտագործմաը և հատուկ միջոցների գործադրմամբ) իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն թիկնապահի կամ պահնորդի որակավորում:

4. Թիկնապահի և պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու և թիկնապահական և պահնորդական գործառույթ իրականացնելու իրավունք չունեն այն անձինք, ովքեր՝

- դատական կարգով ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

- հոգեկան հիվանդության, հարբեցողության կամ թմրամոլության պատճառով հաշվառման են կանգնած բուժհիմնարկներում.

- դատապարտվել են դիտավորյալ հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով մարված կամ հանված չէ.

- խոսափել են ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից:

Նույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված է՝ Պահնորդի (թիկնապահի) համազգեստը, վկայականը, զենքը, հատուկ և տեխնիկական միջոցները

- Պահնորդական կազմակերպությունը պարտավոր է պահնորդին (թիկնապահին) տրամադրել հատուկ համազգեստ, անձը հաստատող վկայական, զենք, հատուկ և տեխնիկական միջոցներ:

- Հատուկ համազգեստը տեսանելի կերպով պարունակելու և/կամ նրան փակցվելու է պահնորդի (թիկնապահի) անունը, ազգանունը և պահնորդական կազմակերպության ապրանքային նշանը, ֆիրմային անվանամը:

- Պահնորդն իրավունք չունի համազգեստ կրելու՝ չլինելով պարտականությունների կատարման մեջ, բացառությամբ մասնավոր պահնորդական կազմակերպության շենքում կամ դրա հարակից տարածքում գտնվելու դեպքերի: Իր պարտականությունները կատարելիս պահնորդը պարտավոր է կրել համազգեստ: Այս պարտականությունից ազատվում են միայն թիկնապահները սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ծառայության մատուցումն ապահովող պարտականությունները կատարելիս:

- Իրենց պարտականությունները կատարելիս պահնորդները (թիկնապահները) կարող են օգտագործել միայն պահնորդական կազմակերպության սեփականությունը համարվող կամ օրինական տիրապետման տակ գտնվող զենքը, հատուկ և տեխնիկական միջոցները: Տրանսպորտային միջոցի վրա տեսանելի կերպով պետք է պատկերված լինեն կազմակերպության անվանումը, ապրանքային նշանը, կազմակերպության հեռախոսա-համարները:

Կատարողը, անվտանգության և պահնորդական ծառայությունների պայմանագրի շրջանակներում պարտավոր է պահնորդին տրամադրել հատուկ համազգեստ, անձը հաստատող վկայական նշված պահնորդի անունը, տեխնիկական միջոցները և համազգեստը, ինչի վրա տեսանելի կերպով պետք է պարունակի պահնորդական կազմակերպության ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, որոնք համարվում են անհրաժեշտ ծախսեր: Այսինքն յուրաքանչյուր պահնորդին, կատարողը պարտավոր է տրամադրել հատուկ համազգեստ տարբեր եղանակների համար գարուն/աշուն, ամառ, ձմեռ, կազմակերպության ապրանքային նշանը շեվրո, լինելով փակցված, որի շուկայական զինը մեկ պահնորդի համար կազմում է 350000-40000 ՀՀ դրամ, չհաշված պահպանվող

օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերի ապահովման համար գրացամատյանները, գրենական պիտույքները և կապի միջոցների այլ ծախսերը:

Ուստի նման պահանջները պարտադիր են Պատվիրատուի 1. Պահակակետ թիվ 1 - ք. Երևան Գյուրջյան 14 հասցե /մակերեսը 2,5հա/ և 2. Պահակակետ թիվ 2 - ք. Աբովյան Արզնու խճուղի 4 հասցե /մակերես 5,64հա/ տարածքներում Անվտանգության և պահնորդական ծառայությունների մատուցման ժամանակ:

Հաղթող ճանաչված «Լիոն սեքյուրիտի սերվիս» ՍՊԸ կողմից տեխնիկական բնութագրով պահանջված երկու պահակետերի համար ներկայացրվել է 12 ամսվա մատուցվող ծառայությունների դիմաց 6,790.000 ՀՀ դրամ ամսական 282,916.67 ՀՀ դրամ մեկ պահակետի համար/ 6,790.000 : 12 ամիս : 2 պահակետ = 282916.67 ՀՀ դրամ/, այսինքն 282916.67 ՀՀ դրամը չի կարող փակել նույնիսկ նվազագույն աշխատավարձով հաշվարկված 90000 կամ 92700 ՀՀ դրամ, տեխնիկական բնութագրով պահանջվող պահնորդների քանակի աշխատավարձերի ընդհանուր հաշվարկը, ինչպես նաև պահանջված ծախսերի հաշվարկը, չհաշված նաև այն, որ տվյալ գումարի մեջ արդեն իսկ բացակայում է շահույթը և ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված շահութահարկը, ինչը խախտում է ՀՀ Գնումների մասին օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանված «Պայմանագրի գնի հաշվարկը՝

Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:» պահանջները:

Վերը նշված փաստերի և կատարվածից ելնելով Պատվիրատուին էլեկտրոնային գրությամբ ներկայացվել է, որ ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1 ծածկագրով 23.12.2020թ.-ին անցկացված բանակցությունների արդյունքներից պարզ է դարցել, որ տվյալ ընկերությունների կողմից ապօրինի գներն արհեստական իջեցնելու, ինչպես նաև առկա է համաձայնեցված գործողությունների միջոցով մրցակցությունը սահմանափակելու միտում, ուստի անվտանգության և պահնորդական ծառայությունների մատուցման համար առաջարկված գնով մեկ պահակակետի համար ամսական 282916.67 ՀՀ դրամի չափով պայմանագրի պահանջների կատարումը համարում եմ անիրատեսական և անհնարին, հետևաբար անհրաժեշտ է չկնքել պայմանագիրը և վերը նշված փաստերի հիման վրա կատարվածը ներկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարություն, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ ներառելու համար, սակայն Պատվիրատուն չի պատասխանել գրությանը և միջոցներ չի ձեռնարկել:

Բողոքի փաստական և իրավական հիմնավորումները.

Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1. գնման գործընթացի միասնական կանոններով միցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2. պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոռում.

3. ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի Գնման առարկայի բնութագրերը՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Գնման առարկայի բնութագրերը՝

1. պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2. չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3. պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4. ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և ՀՀ գործող նորմատիվատեխնիկական

փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի Պայմանագրի գնի հաշվարկը՝

Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահարկը:

Պայմանագրի գինը՝

1. կարող է լինել գործոնային, երբ պայմանագրի գինը փոփոխվում է պայմանագրով նախատեսված պայմանների (գործոնների) փոփոխության ազդեցությամբ: Հակառակ դեպքում պայմանագրի գինը կայուն է, և կողմերը պարտավոր են պայմանագրային պարտավորությունները ողջ ծավալով կատարել պայմանագրի գնի շրջանակում.

2. պետական գաղտնիք պարունակող՝ ռազմական կարիքների բավարարման նպատակով արտադրանքի նոր տեսակների հեռանկարային մշակման, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների ձեռքբերման դեպքում կարող է լինել փաստացի ծախսերով հաշվարկված, պայմանով, որ այն չպետք է գերազանցի տվյալ ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը ձեռք բերելու համար նախատեսված ֆինանսական հատկացման չափը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի Գնումների ընթացակարգի կասեցումը՝

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն մասով նախատեսված որոշումը գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գնման առարկայի հատկանիշները բավարար ճշտությամբ սահմանված չեն որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, հնարավորության չի տալիս մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան: Ուստի նաև նման խախտմամբ կնքվելիք պայմանագրից զերծ մնալը Մասնակցին տրված իրավունքն է:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը, պարտավորեցնել ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը:

Ընկերությունը 20.01.2021թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«19.01.2020թ.-ին ԳԲՔԱ-ԼՕ-2020/130 ծածկագրով բողոքի քննության ընթացքում, որպես երրորդ անձ ներգրավված «Լիոն սեքյուրիտի սերվիս» ՍՊ ընկերության տնօրենի կողմից հայտարարվեց, որ ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1 ծածկագրով մրցույթում հաղթող ճանաչվելու համար առաջարկված գնի հաշվարկում ներառված է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը) պահանջվող պահնորդների քանակով հաշվարկված աշխատավարձը, այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը, սակայն նիստի ընթացքում հաշվարկները ներկայացնելուց հետո

տվյալ ընկերության ղեկավարը հայտարարեց, որ տարվա կտրվածքով շահույթ է ունենալու 130.000 ՀՀ դրամ, հաշվի առնելով Ավելացված Արժեքի Հարկի հաշվանցունը:

Հաշվի առնելով այն, որ գնումների բողոքարկման խորհրդի նիստերը առցանց չեն հրապարակվում և չկան ապացուցողական փաստեր առաջարկված գնով Պայմանագրի գնի հաշվարկի վերաբերյալ, ուստի խնդրում եմ «Լիոն սեքյուրիտի սերվիս» ՍՊ ընկերությունից պահանջել ներկայացված բողոքի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, որում ներառված կլինեն ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1 ծածկագրով գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթի հաշվարկները՝ հիմք Գնումների մասին ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը Պայմանագրի գնի հաշվարկը:»:

3. <u>ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 28.12.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/19660-2020 գրությամբ դիմել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 26.12.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստերին, 29.12.2020թ.-ին թիվ 172/2-2020 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով «Տրան-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 26.12.2020թ. ներկայցրած ԳԲՔԱ-ԼՕ-2020/130 բողոքը՝ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ի դիրքորոշումը հետևյալն է՝ ՀՀ կառավարության «Գնումների մասին» ՀՀ օրենքի և 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման մեջ չկա հիմք մասնակցի հայտը մերժելու չհիմնավորված ցածր գնային առաջարկի պատճառով:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Լիոն Սեքուրիթի սերվիս» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Լիոն Սեքուրիթի սերվիս» ՍՊԸ-ն 12.01.2021թ.–ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձի ներկայացուցիչը, ներկայանալով 19.01.2021թ.-ին հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին, բողոքի իրավական և փաստական հանգամանքներին:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/130 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով 14.12.2020թ.-ին հայտարարվել է «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Հայտերի բացման նիստի օր է սահմանվել 21.12.2020թ.-ին:

iii. Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան:

iv. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով անվտանգության և պահնորդական ծառայությունների համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«Պահակակետ թիվ 1 - ք. Երևան Գյուրջյան 14 հասցե /մակերեսը՝ 2,5հա/

Պահակակետ թիվ 2 - ք. Աբովյան Արզնու խճուղի 4 հասցե /մակերես՝ 5,64հա/ Պահակակետեր թիվ 1,2-ի պահպանության տակ է գտնվում հողատարածք և շենք-շինություններ:

Տարածքի անվտանգությունը և պահպանությունը յուրաքանչյուր պահակակետում պետք է ապահովվի 4 աշխատակցի միջոցով (տարվա բոլոր օրերին, ներառյալ ոչ աշխատանքային և տոն օրերը), որոնցից նվազագույնը 1 աշխատակցի ներկայությունը յուրաքանչյուր պահակակետում 24 ժամյա ռեժիմով պարտադիր է:

Յուրաքանչյուր օր ՝ շուրջօրյա ռեժիմով աշխատակիցը պետք է՝

-հերթապահություն իրականացնի տեսահսկման համակարգի միջոցով,

-իրականացնի հասարակական կարգի վերահսկողություն,

-կանխի խոշոր նյութական արժեքների տեղաշարժը՝ առանց համապատասխան թույլտվության և փաստաթղթերի,

-արգելի կողմնակի անձանց մուտքը,

-կատարի տարածքի շրջայց,

-իրականացնի Պատվիրատուի կողմից սահմանվող անվտանգության և պահակային կանոնները,

-արագ արձագանքի արտակարգ իրավիճակների դեպքում/հրդեհ, խուլիգանություն, հարձակումներ և այլն/ կատարելով նաև անհրաժեշտ ահազանգեր

-3-5 րոպեի ընթացքում ապահովի հատուկ նշանակության խմբերի առկայություն պահպանվող տարածքում,

Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատակցի անգործության կամ անհրաժեշտ միջոցառումները ժամանակին չիրականցնելու հետևանքով Պատվիրատուին հասցված վնասի համար:

Անվտանգության և պահնորդական ծառայության աշխատակիցը պետք է ունենա՝ ձեռքի լապտեր՝ գիշերային ժամերին շրջայցերի համար նախատեսված և անհրաժեշտ լուսավորություն ապահովող, ռետինե մահակ, պետք է տիրապետի առաջին բուժօգնության կանոններին, տիրապետի տեսահսկման համակագերի շահագործման կանոններին: Բոլոր հերթափոխների աշխատակիցները պետք է լինեն հագնված նույն տեսքի հատուկ համազգեստով, որը կտարբերվի քաղաքացիական հագուստներց:»:

v. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել նաև «Աբսոլյուտ Սեքյուրիթի» ՍՊ, «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊ, «Քինգ Մարշալ» ՍՊ, «Տրանս Սֆեր» ՍՊ ընկերությունները:

vi. Մասնակիցներն առաջարկել են հետևյալ գները.

Հ/Բ	Ծառայության անվանումը	Գնային առաջարկները (ՀՀ դրամ)							
		Մասնակցի անվանումը							
		«Աբսոլյուտ Սեքյուրիթի» ՍՊԸ		«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ		«Քինգ Մարշալ» ՍՊԸ		«Տրանս Սֆեր» ՍՊԸ ֆսր»	
		Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ՈՎ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ՈՎ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ՈՎ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ՈՎ
1	Անվտանգության և պահնորդական ծառայություններ	9264000		8250000	9900000	14400000	17280000	9200000	

vii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.12.2020թ.-ի նիստի թիվ 21/1-2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք

ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որոշել է հայտերի բացման և գնահատման նիստը կասեցնել և «Աբսոլյուտ Սեքյուրիթի» ՍՊ, «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊ, «Քինգ Մարշալ» ՍՊ, «Տրանս Սֆեր» ՍՊ ընկերություններին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների՝ 23.12.2020թ.-ին:

viii. Հանձնաժողովի 23.12.2020թ.-ի նիստի թիվ 21/1-3 արձանագրության համաձայն՝ բանակցություններին մասնակցած ընկերությունները առաջարկել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Բ	Ծառայության անվանումը	Գնային առաջարկները (ՀՀ դրամ)					
		Մասնակցի անվանումը					
		«Աբսոլյուտ Սեքյուրիթի» ՍՊԸ		«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ		«Քինգ Մարշալ» ՍՊ	
		Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ՈՎ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ՈՎ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ՈՎ
1	Անվտանգության և պահնորդական ծառայություններ	8040000		6790000	8148000	6800000	8160000

ix. Նույն արձանագրության համաձայն՝ 23.12.2020թ.-ին ժամը 12:00-ին տեղի ունեցած միաժամանակյա բանակցություններին արդյունքում «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված և հաղթող մասնակից է ճանաչվել «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն՝ առաջարկելով պայմանագիրն կատարել 8 148 000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով, որպես առաջարկվող ծառայության արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար) առաջարկելով 6 790 000 ՀՀ դրամ գումար:

x. 23.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

xi. Հայտարարությամբ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

6. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Տրանս-Սֆեր»

ՍՊԸ-ի կողմից 26.12.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման::

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ի կողմից անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով 14.12.2020թ.-ին հայտարարված «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու

համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Վերոնշյալ նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայմաններ, համաձայն որոնց գնային առաջարկը պետք է բաղկացած լինի արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ՝ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում նաև հրավերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ի կողմից անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով 14.12.2020թ.-ին հայտարարված «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան, որին մասնակցելու նպատակով, հայտ ներկայացրած «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն 23.12.2020թ.-ին ժամը 12:00-ին տեղի ունեցած միաժամանակյա բանակցություններին արդյունքում ճանաչվել է «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված և հաղթող մասնակից՝ առաջարկելով պայմանագիրը կատարել 8 148 000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով, որպես առաջարկվող ծառայության ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումար առաջարկելով 6 790 000 ՀՀ դրամ գումար:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Բողոքաբերը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Սույն գործով «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ն, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված ծառայության արժեքը՝ 6 790 000 ՀՀ դրամ գումարը պակաս է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերի ինքնարժեքից: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Բողոքաբերն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Ավելին, երրորդ անձ ընկերության ղեկավարը հրավիրված նիստով հայտնեց, որ տարվա կտրվածքով ակնկալվող շահույթի գումարը կազմում է 130 000 ՀՀ դրամ: Ինչպես նաև հարկ է նկատել, որ Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մեկ այլ ընկերություն ևս՝ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն միաժամանակյա բանակցություններին նույնպես ներկայացրել է «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գնային առաջարկից 10 000 ՀՀ դրամ գումարով տարբերվող գնային առաջարկ՝ 6 800 000 ՀՀ դրամ:

Անդրադառնալով բողոքաբերի 20.01.2021թ.-ի գրությամբ երրորդ անձից բողոքի վերաբերյալ գրավոր դիրքորոշում պահանջելու խնդրանքին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ պահանջը չի ելնում Օրենքի ու Կարգի դրույթներից, իսկ գնումների

հետ կապված բողոքներ քննող անձը որպես պետական մարմին ու պաշտոնատար անձ իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու

հանգամանքներն անհիմն են, որպիսի պայմաններում ներկայացված բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի կողմից 26.12.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/130 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**